



Թող տրապիզոնցի հայ-կաթոլիկը անգամ մը  
ընդմիշտ վերջ դնէ իր ներքին անհամաձայ-  
նութիւններուն և ճանչնայ չարը բարիէն զա-  
տել։ Արիկեանը փափագ մունէր. եպիսկոպոս  
ըլլալ. նա հասաւ իր փափագին. նա դեռ ա-  
ւելի բարձր երազներ ալ ունի։ Պօլսոյ կա-  
թողիկոսութեան գահուն ալ թերևս ձգտի,  
քանի որ նա թափուր է, իմմանուէլեանի մահ-  
վամբ. նա պօլսեցի մէ և երբէք գաւառացին  
հետ չէ կարող ընտելանալ, անոր ցաւերուն  
գարման և վերքերուն բալասան լինել. անոր  
երազը իրականացած է. նա կարող է միայն  
Պօլիս ապրի իր շրջանին մէջ, ուր տկար ո-  
գինները որսալով աջողի թերևս ետքը, ոչ այս  
անգամ, կաթողիկոս ալ ըլլալ. վայ այն աւուր  
և անոր բէժիմին տակ ապրողներուն։

նից 2 ր. Ոսկանեան-Քէլարեան ընկ-ից 2 ր.  
զախեանից 2 ր. Ա. Գասպարեանից 2 ր. Ղ. Ե-  
թանգեանից 1 ր. Ն. Քէորգեանից 1 ր. Լ. Դաւթ-  
1 ր. Զարգարեանից 1 ր. Մ. Քէորգեանից 1 ր.։  
մարն է 69 ըուբլի, որից գնարել ենք կառքի 2 ր.  
իրարից նեռու տները ման գալու, նաև պօստի  
25 կուտէկ։

Սրանով յայտնում եմ շնորհակալութիւն պ. պ.  
բատուներին, որոնք ջերմ սրտով փափագեցն յաս-  
նելու իրանց լուսան յօգուտ կարօտեաներին  
շնորհակալութիւն պ. Մելիք-Թանգեանցից, որը  
մեզ աջակցեց։

ՀԵՂՋԻ ԼԵՐԵՐ

ՏՐԱՎԻԳՈՆԵԼԻ

## ՆԱՄԱԿ ԾԵԲԵԼԴԱՅԻՑ (Սուխումի շրջան)

Ապրիլի 27-ին

Մեր գիւղերում վաղաժամ ամուսնութեան զոհեր շատ են, զոհեր՝ որոնց եթէ մէկ քանիսը մահով են վճարում, շատերն էլ կանանց հիւանդութիւններով են տառապում. զոնչ հէնց հիւանդութեան սկզբներին օրինաւոր բժշկի դիմէին, գուցէ դարձան տարվէր հիւանդին, գուցէ նուազ չարչարվէր թշւառ հիւանդը, քայլ չէ, սկզբներում «ոչ ինչ, կանցնի» մտածում են, երբ չէ անցնում, գիւղ ական պառաւների դեղերով և ֆալերով են բաւականանում, այդ այդ էլ չօգնեց, ամենաքէտ մօլլալին—գրբացին են դիմում, ինչպէս արել էին այս վերջին զոհի համար էլ:

ինքնավարութեան բոլոր յանձնաժողովներունք՝ մէկը-միսսի ետևից՝ բաց էին արանց նիստերի գոները մամուլի ներկայացիների առաջ: Դրանք կարծես դառն տակ էին խաղում երիտասարդ, ազատանոյն իսկ գրական գործիչ կոչված այն նաևորների գլխին, որոնք գրփուրը բեր ներին՝ դէմ էին խօսել մամուլի ներկայացիներին նիստերին թողնելուն: Այժմ պարմներին վերջնական ուժեղ ապահով բեհանում է հասցնել քաղաքային վարչունը—ուսպավան, իր քաղաքագլուխ-նախարար միասին: Ահա թէ ինչ է գորում պ. ըս-

Բերել են մօլլան, սա գիրը է բաց արել,  
ժողովել է իբր թէ ջիներին (չարքերին), և  
հրամայել է հրացան արձակել, և հիւանդի  
տէրերը կատարել են հրամանը, որպէս զի  
«ջիների պետը սատկի, արքանեակները ցըվեն,  
հիւանդը ազատվի»: Այն, հիւանդը ազատ-  
վում է, բայց մահով...

Վաղաժամ ամուսնութիւնների պատճառաբանութիւնները բազմադիմի են, որոնց վրա ուրիշ անգամ կը գրենք: Բայց այն պատճառը, որի վրա այս տնգամ ուղղում եմ մատնացոյց անել, և որը արդարանալին և ամենազլխաւորներից մէկն է, սարսափն է առեանգութիւնից:

Մէկի աղջիկ երեխան եթէ արդէն հասել է  
11—12 տարեկանի, արդէն սարսափը տիրում  
է նրան, թէ արդեօք իր տունն էլ կենթարկվի՞  
յարձակման, այնունեաև զինված պահպանու-  
թիւն պէտք է անել, անքուն հսկել: Որոշ գա-  
սակարգի մարդիկ, մինչև իսկ ընտանիքներ,  
իրանց համար քաջագործութիւն են համարում  
և պարծանքով են թում իրանց ձեռքով կա-  
տարգած առեանգութիւնները, շատը նոյն իսկ  
աղջկայ կամքի հակառակ, մազերից բռնած  
քաշշրտելով և փայտի, հրացանի կոթի հա-  
րուածներ իջեցնելով թշուած երեխայի գլխին,  
թիկունքներին, մէջքին և այլն: Առևանգու-  
թիւնների միջոցին լինում են մինչև իսկ ա-

բիւնհեղութիւններ:

Եւ այդ միջնադարեան բարբարսս գործողութիւնները ընդհանրապէս աշողութեամբ են պատճենական և քաջալերութիւն գտնում, որովհետեւ շատ ունենք այնպիսի քահանաներ, որոնք, փոխանակ պաշտպանելու, աղջկայ վրա բռնութիւն իսկ գործ դնելով, հակառակ

Նրան կամքին պսակում են նրան իր չը սիրած,  
ատած անձի, իր պատիւը բունքարող դահճի  
հետ։ Եւ այդ թշուառ զոհերը այնչափ տգէտ  
են, որ միանգամ պսակվելուց յետոյ, հաւա-  
տում են, թէ այլ ևս անքակուելի կերպով կապ-  
ված են և իրաւունք չունեն բողոքելու այդ  
բանի գործողութեան դէմ, լրված ամեն կողմից,  
որովհետեւ աղջկայ ծնողները և ազգականները  
կատարված իրողութեան առջև լուսմ են կա-  
տավելով, և կամ ահարեկվելով։

Սուրէն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ

Մերկ, ապրիլի 13-ին  
Անցեալ մարտ ամսի 20-ին «Մշակ» լրագրի խմբա-  
լութեանը փոխադրած լինելով 66 բուրքի, այժմ ի  
փոխութիւն յայտնում եմ որ, ուղարկած մեր 66 բ.  
տացել ենք (յօդուա ազգանելին) Կօկանդի հայ հա-  
յանքից Զրօնէքի տօնին ման գալով աւետիք պ. Ղ.

Ահա նուիրատուների անունները: Մ. Աթաբէկեանից ու, առևտրական տան Գէորգեանից 5 ր. Կ. Աւատեհանից 5 ր. Գ. Գարիբեանից 5 ր. Ա. Ալափաջեանից 5 ր. Մ. Մելիք-Շահնազարեանից 5 ր. Ա. Գէորգեան և ընկ. ր. Մ. Աւանէսեանից 4 ր. Խ. Աղախանեանից 4 ր. Պ. Պատաշանեանից 3 ր. Ի. Ամիրզադեանից 3 ր. Բ. Քօսարեանից 3 ր. Խ. Դանէլեանից 3 ր. Ա. Զարարեան

Մեզ հաղորդում են, որ մօտ օքերս գերասան-  
ների և սիլվողների մասնակցութեամբ վրաց  
աղնաւականութեան թատրօնում պէտք է առա-  
ջին անգամ Թիֆլիսում ներկայացվի և. Մա-  
նուելեանի «Նկարիչ. Թատբնեան» պիէսը. Այդ  
պիէսը ներկայացված է եղել անցեալ տարի  
թագուում:

ՆԱԽՆՁԵՒԱՆ գիւղից (Կարսի նահանգ) մեզ գրում են. «Նախիջևանի գաւառամասը մի խուլ անկիւն է, անջատ կենտրօնական քաղաքներից, խճուղիներից նեռու և գրեթէ մոռացված: Դեռ ևս հայոց ծխական գպրոցների ժամանակ սա զուրկ էր ամենատարրական՝ միդասեան գպրոցից: Դպրոցի խիստ կարևորութիւնը ի նկատի ունենալով, Կարսի ուսումնարանական շըրջանի դիրեկտօրի կողմից ազդարարվեց՝ բանալ երկդասեան գպրոց 1700 ըուբլի բիւրժէտով: Ազրիլին-ին գաւառամասի պրիստաւը յայտարարեց ժողովրդին գպրոցի բացման մասին: Ժողով կայացրին և որոշվեց միդասեան գպրոց բանալ 700 ըուբլի ծախսով Նախիջևան գիւղում և մէկն էլ Ծպնի գիւղում: Դպրոցի շինութիւնը յանձն առան գիւղացիք և այժմ վարձված են երեք սենեակներ. ուսումնարանի և ուսուցչի համար: Դպրոցի շինութիւնը կըսկսվի եկող տարի, իսկ գասաւանդութիւնը ուսումնական տարվայ սկզբին»:

այնաեղից էլ Անչու, ուր նրանք քանոքեցին տեղական բանտը և ազատեցին բանտարկեալներին: Իսկ Սէուլից հաղորդում են «Standard» լրագրին, որ Կօրէայի մայրաքաղաքում ամեն օր տեղեկութիւններ են ստացվում կօզակների գօրաբաժինների ջնջման մասին հրւսիսային Կօրէայի զանազան կէտերում: (Տ.Ա.)

Եազօնական սպիտակ գրքի առիրով: Ներկայ պատերազմի նախընթաց բանակցութիւնները Ռուսաստանի և Եազօնիայի միջև, ինչպէս յայտնի է, հրատարակվեցին հապօնական սպիտակ գրքի մէջ: Կասկած չը կայ, — ասում է «Հօն. Վրեմյա» լրագիրը, — որ այդ գօկումէնտները ընտրված էին չափազանց միակողմանի և որ անհրաժեշտ է հակագրել նրանց գօկումէնտներ ուսումների կողմից: Եթէ հաւատանք Պետրոսութիւնից «Memorial Diplomatique» լրագրին ուղարկած հաղորդագրութեանը, լաւատեղեակ շրջաններում հաւատացնում են, որ ուսուց կառափարութիւնը մօտաւոր ապագայում կը հրատարակէ արտաքին գործերի մինիստրի, ծովաակտ Ալեքսեևի և ուսոն Յանէւ

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՒՔԸ

Պօրտ-Արտուրի գրաւման հնարաւորութիւնը: Արտասահմանեան մամուլի մէջ այժմ շատ էն խօսում Պօրտ-Արտուրի գրաւման հնարաւորութեան մասին եապօնացիների կողմից: Այդ առիթով «National Zeitung» լրագրի մէջ տքագած է հեաևեալ նկատողութիւնը «լաւ տեղակ աղբիւրից»:

«Ծուռ-եապօնական պատերազմն սկսվելու րոպէին Պօրտ-Արտուրը վատ էր պատրաստված պաշտպանութեան համար: Բայց որովհետեւ եապօնացիները շատ ժամանակ տուին ուուներին, այդ պատճառով ամեն բան գրստվեց: Շատ շաբաթների ընթացքում օր ու գիշեր աշխատում էին նոր ամրութիւնների, բատարէաների, խրամատների վրա և այլն: Ինժեներային և նաւահանգստի վարչութիւնը կրկնակի և եռակի օրավարձ էր տալիս չինական բանտորներին: Այժմ Պօրտ-Արտուրը շրջապատված է շամարից նոր ամրութիւնների ամբողջ շղթաներով: Ամրութիւնները հասցրված են մինչև Յգին-Զժոու, ամենանեղ տեղը Լեազունեան թերակղզու վրա: Ներկայում Յգին-Զժոու գտնվում է եապօնացիների ձեռքում, Կարանք երկի կը գրաւեն և այդ դիրքին մերձակայ ամրութիւնները: Սակայն յետոյ եապօնացիները ստիպված կը լինեն կամաց-կամաց իրանց ձեռքը գցել բերդի վրա տիրապետող ուրիշ մարտկոցները և բատականներով:

Որ անհամբերութեամբ սպասվում է Պետերբուրգում, անհրաժեշտ է համարվում մանաւանդ այն տեսակէտից, որ եապօնական կառավարութեան հրատարակած գրագրութիւնը մեծ տպաւորութիւն գործեց Ծուռաստանում: Եապօնացիները աշխատում էին հաստատել, որ Եապօնիան ընդհատեց բանակցութիւնները, սպառելով հաշտութեան համար բոլոր միջոցները: Նա իրը թէ ստիպված էր խզել իր յարաբերութիւնները Ծուռաստանի գործունէութեան պատճառով և զրա համար էլ Ծուռաստանի վրա է դրվում բոլոր հետևանքների պատասխանատութիւնը: Պետերբուրգում շատ լաւ հասկանում են, թէ ինչ դրդումներով է զեկավարվում եապօնական կառավարութիւնը աշխատելով այլպիսի կարծիք տարածել Ծուռաստանի ընթացքի մասին: Ծուռաց կառավարութիւնը այդ պատճառով ցանկանում է, որ յայտնի լինի լիակատար ճշմարտութիւնը:

Եւ որքան շուտ հրատարակվի այդ գրագրութիւնը ամենալիակատար կերպով, ասում է, «Խօ. Յր.» լրագիրը, այնքան լաւ:

Եապօնացիների արշաւանքը. Եապօնական աղբիւրներից «Giornale d'Italia» լրագրին հաղորդում են, որ եապօնացիները 40 պաշարողական թնդանօթներ ափ հանեցին Լեազունեան թերակղզու արևելեան ափի վրա: Նոյն լրագրի ասելով՝ եապօնացիները արշաւում են կատաւեկի մաս եներ ոսպասաժիններով, առաջ

ամենապակասը մէկ տարով՝» (Խօ. Յր.)

Տօկիօից հեռագրում են «Daily Chronicle» լրագրին. «Եապօնացիները վերջնականապէս անջատեցին Պօրտ-Արտուրը: Նրանց զօրքը տիրապետում է Տայանգո գետի վրա, որը հոսում է Սիօնից դէպի հարաւ: Պաշարողական մեծ թնդանօթների հետ միասին եապօնացիները բերում են նոր պայթուցիկ նիւթի մեծ պաշարներ: Նոր նիւթը, ինչպէս հաղորդում է

10,000 սարդ պաշարում են Պօրտ-Արտուրը:

Սօցիալիզմը նապօնիայում: Եւրոպական կուլտուրայի հետ միասին եապօնիա փոխադրվեց և ամէրիկական, եւրոպական սօցիալիզմը: Եապօնական սօցիալիզմը ներկայում շատ յիշեցնում է գերմանական սօցիալիզմի դրութիւնը 1870 թւին: Որպէս Գերմանիայում 1870 թւին, հասարակութիւնը ըլլատերազմական ուժով է վարակված: Ամենըը, ինչպէս այն ժամանակ

„Нов.“ Ірвінг, що відноситься до його післявоєнного періоду, є дуже цікавим. Він висловлюється про те, що «Французька революція» — це не тільки історична подія, а й величезний соціальний та політичний змінник, який змінив світ. Він відзначає, що Французька революція була першою масовою революцією в історії, яка змінила не тільки Францію, а й весь світ. Він висловлюється про те, що Французька революція була першою масовою революцією в історії, яка змінила не тільки Францію, а й весь світ.

պրօպագանդը պատերազմի գէմ և ի պաշտպանութիւն ազգերի եղբայրութեան: Նա նախազգուշացնում է եապօնական բազմաթիւ պրօլետարիատին, որ տնտեսական թշուառ հետեւանքներ կոնսենսյ պատերազմը մինչև անգամ ավարտվի: (Տ.Լ.)

Վարդիկոսոկը չեն ուզում պատահել: Հօնգոսից «Новости» լրագրին հետաքրում են: «Daily Mail» լրագրը հազորդում է, որ եապօնացիները հրաժարվեցին Վարդիկոսոկը պաշտպան ծրագրից: Ռուսները գրաւած ունեն գեղեցիկ գերբեր Կաոլինչէնի մօտ:» (Տ.Լ.)

Ռուսների առաջնորդացորդիւնը Կօրեայում:

«More Post» լրացրի Արևուի Թոթական հա-



